**Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր**
**ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ,** ETNIP-CS-3/2013

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**
**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (ՆԳՀԸ)**
**Ծրագրի №:** P146199
**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ**

Սույն Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու Հրավերը հաջորդում է 2013թ.-ի նոյեմբերի 15-ին UN Development Business և www.gnumner.am (www.procurement.am) էլ.կայքերում տեղադրված վերոնշյալ ծրագրի Գնումների Ընդհանուր ծանուցմանը:
Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին (ՎԶՄԲ) «էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման և «էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի ֆինանսավորման համար և նախատեսվում է գումարների մի մասն օգտագործել Հայկական էլեկտրաէներգետիկական համակարգի (ԷԷՀ) էլեկտրահաղորդման ցանցի հուսալիության և անվտանգության ապահովման և բարելավման խորհրդատվական ծառայությունների գնման համար:
Խորհրդատվական ծառայության նպատակն է կատարելագործել Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի աջակցությամբ մշակված Հայկական ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության նոր ցուցանիշներ: Մասնավորապես ԷԷՀ-ի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման վերլուծությունը պետք է ընդգրկի հետևյալ խնդիրները.

1) ԷԷՀ-ի հզորության և էներգիայի հաշվեկշիռների ու հաղորդման ցանցի տարրերի բեռնվածության թույլատրելի արժեքների ապահովման վերլուծություն, որը պետք է կատարվի կայունացված ռեժիմում բեռնվածքի հոսքերի ուսումնասիրության միջոցով,
2) Հաղորդման ցանցի հանգույցների լարման և հաճախության թույլատրելի արժեքների ապահովման վերլուծություն
3) ԷԷՀ-ի սինքրոնիզմի կայունության ապահովման վերլուծություն
4) Գնահատել համակարգի հուսալիությունը՝ արտադրության հեռանկարի տեսանկյունից

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (ընկերության մասին գրքույկներ, նմանատիպ աշխատանքների նկարագրությունը (միջազգային ֆինանսական ինստիտուտների (ՄՖԻ) ֆինանսավորմամբ կատարված առաջադրանքը նախընտրելի է), նմանատիպ պայմաններում աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը 20 միավոր/
- Կազմակերպության փորձը նմանատիպ ծրագրերում, (ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերը առվելություն է) /առավելագույնը 60 միավոր/
- Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կազմակերպության փորձը նմանատիպ ծրագրերում, (ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը նախընտրելի է) /առավելագույնը 20 միավոր/

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ուշադրություն դարձնեն Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցի 1.9 կետին, որտեղ ներկայացված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությունը:
Խորհրդատուները իրենց որակավորումը բարելավելու նպատակով կարող են միավորվել այլ ընկերությունների հետ Համատեղ Ձեռնարկատիրական Գործունեության կամ ենթախորհրդատվության ձևով:
Խորհրդատուն ընտրվելու է Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2014թ. հոկտեմբերի 20, ժամը 15:00:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,Զորավար Անդրանիկի 1,
Գլխավոր տնօրեն Արամ Անանյան
Հեռ: +37410-720010; ֆաքս: +37410-720121; էլ.հասցե: hvenprojects@gmail.com;